ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/248

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 27.11.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17151-2020 գրությամբ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 16.11.2020թ. թիվ 1/18-2/72161-2020 գրության հիման վրա 19.11.2020թ. թիվ 26/26-1/17151-2020 գրությամբ նախաձեռնել է «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ար-ԱՇ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետյալը.

««Ար-ԱՇ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 31.10.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով՝ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ, մասնավորապես.

Հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1 հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Եվ նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից էլ. եղանակի միջոցով 10.11.2020թ. ստացվել է ծանուցում, որով մասնավորապես հայտնել են՝ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության արդյունքում «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1 հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը առաջարկում է «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին սույն ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և վերը նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ.փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով ...:

Ծանուցումը ստանալուց հետո, նույն օրը, մի քանի ժամ անց, այսինքն սահմանված ժամկետում, «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն իր էլ. փոստի հասցեից ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով

գնման ընթացակարգի գնումների համակարգողի՝ gurgen_ghazaryan@taxservice.am էլ.փոստին հասցեին է ներկայացվել շտկված փաստաթղթերը, այն է՝ Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ (Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ կցվում են, ինչպես նաև ներկայացվում է դրանք ուղարկելը հավաստող ապացույց):

Սակայն գնահատող հանձնաժողովի 12.11.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

- *Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից

սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի ե) պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցումը՝ էլ. եղանակի միջոցով ստացվել է 10.11.2020թ., որով մասնավորապես ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության արդյունքում «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1 հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և առաջարկել սույն ծանուցումը ստանալուց՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և վերընշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ.փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով:

«Ար-ԱՇ» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալու նույն օրը՝ 10.11.2020թ.՝ իր էլ. փոստի հասցեից՝ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգողի՝ gurgen_ghazaryan@taxservice.am էլ.փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթղթերը /Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1 հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ/:

Սակայն անհասկանալի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն արձանագրվել է, որ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

Մինչդեռ՝ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը և շտկման ծանուցումը ստանալուն պես՝ սահմանված ժամկետում ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով ընթացակարգի համակարգողի՝ gurgen_ghazaryan@taxservice.am էլ.փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթղթերը՝ Հավելված-1-ը, Հավելված 2-ը և Հավելված 2.1 հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ /կցվում է/:

Գտնում ենք, որ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն շտկումը կատարելու և սահմանված ժամկետում պահանջված փաստաթղթերը ուղարկելու պայմաններում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/248 ընթացակարգի շրջանակներում 30.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ Ընկերությանը տրամադրելով մեկ աշխատանքային օր՝ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.11.2020թ. թիվ 1/18-2/72161-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-

վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի տարածքում ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն: ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության արդյունքում «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և համաձայն ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և դրա մասին համակարգի միջոցով տեղեկացրել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/248 ընթացակարգի շրջանակներում 30.11.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/248 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/248 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի **կողմից** հայտով

ներկայացված փաստաթղթերը՝ Հավելված 1, Հավելված 2 և Հավելված 2.1-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 10.11.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17151-2020 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 16.11.2020թ. թիվ 1/18-2/72161-2020 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում</u>***

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ ***հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը,***

<u>ապա նրա հայտը գնահատվում է բավարար:</u> Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ Հավելված 1, Հավելված 2 և Հավելված 2.1-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 10.11.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ

իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է <u>նույն օրը</u> դրա մասին մասնակցին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցելու պարտավորություն</u>:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում

իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ Հավելված 1, Հավելված 2 և Հավելված 2.1-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մինչդեռ Կարգի 41-րդ կետի համաձայն արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ 31.10.2020թ., ծանուցվելու փոխարեն ծանուցվել է 10.11.2020թ., որպիսի պայմաններում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Նման պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար հնարավոր չէ արձանագրել «Ար-ԱՇ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2020թ. թիվ 26/26-1/17151-2020 գրությամբ «Ար-ԱՇ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**